Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«ՄՏՍ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՄՏՍ Արմենիա» ՓԲԸ-ի (Ընկերություն) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին

վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Խմբի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

Grant Thornton

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

29 մայիսի 2018

Լիլիթ Արաբաջյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	33,591,391	37,208,285
Ոչ նյութական ակտիվներ	5	4,838,666	5,215,205
Չապահովված փոխառություններ	6	17,594,904	17,180,510
Հետաձգված հարկային ակտիվներ	7	831,134	583,821
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	407,265	1,297,133
		57,263,360	61,484,954
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	2,074,381	1,740,159
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	16,581,386	22,570,125
Չապահովված փոխառություններ	6	8,280	8,280
Կարճաժամկետ վարկեր աշխատակիցներին		260,236	65,176
Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճար		1,378,537	3,399,365
Ժամկետային ավանդներ	10	4,923,812	513,993
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	11	3,114,803	3,186,930
		28,341,435	31,484,028
Ընդամենը ակտիվներ		85,604,795	92,968,982

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	12		
Բաժնետիրական կապիտալ		550,000	550,000
Պահուստային կապիտալ		82,500	82,500
Կուտակված շահույթ		76,796,626	83,500,009
		77,429,126	84,132,509
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ռոումինգի երաշխիքային կանխավճարներ		108,053	106,623
Ակտիվներին վերաբերող շնորհներ	13	585,003	359,126
		693,056	465,749
Ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ		1,361,813	1,612,374
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	6,120,800	6,758,350
		7,482,613	8,370,724
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		85,604,795	92,968,982

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 29 մայիսի 2018թ.-ին:

Ռալֆ Յիրիկյան
Գործադիր տնօրեն

Ռինատ Յուսուպալիև
Ֆինանսների և հաշվապահության բաժնի ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շարժական կապի ծառայություններ	15	36,052,976	38,508,145
Փոխկապակցման ծառայություններ		11,933,776	12,037,896
Ռոումինգ ծառայություններ		2,752,122	3,502,675
Ավելացված արժեքի այլ ծառայություններ		814,111	374,915
Ցանցային այլ ծառայություններ		1,530,773	1,021,417
Ապրանքների վաճառքից հասույթ	16	3,677,280	3,371,923
Այլ գործառնական եկամուտ		788,337	661,035
		57,549,375	59,478,006
Մաշվածություն և ամորտիզացիա		(12,044,640)	(14,104,576)
Միջազգային փոխկապակցման և ռոումինգի ծախսեր	17	(7,504,384)	(8,430,740)
Աշխատավարձ և հատուցումներ աշխատակիցներին		(6,807,088)	(8,267,031)
Ցանցի շահագործման այլ ծախսեր	18	(7,018,323)	(6,402,088)
Միջնորդավճարներ դիլերներին		(574,249)	(1,219,713)
Կառավարման և խորհրդատվական վճարներ		(2,631,701)	(2,615,574)
Վաճառված ապրանքների ինքնարժեք		(3,257,118)	(2,926,501)
Այլ գործառնական ծախսեր	19	(5,682,554)	(6,580,146)
		(45,520,057)	(50,546,369)
Գործառնական գործունեությունից շահույթ		12,029,318	8,931,637
Ֆինանսական եկամուտ	20	633,353	765,255
Փոխարժեքային տարբերությունից վնաս, զուտ	21	(72,950)	(215,740)
Շահույթ մինչև հարկերը		12,589,721	9,481,152
Շահութահարկի գծով ծախս	22	(2,793,104)	(3,337,123)
Տարվա շահույթ		9,796,617	6,144,029
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		9,796,617	6,144,029

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Պահուս-տային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	550,000	82,500	97,689,313	98,321,813
Տարվա շահույթ	-	-	6,144,029	6,144,029
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	6,144,029	6,144,029
Շահաբաժիններ	-	-	(20,333,333)	(20,333,333)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(20,333,333)	(20,333,333)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	550,000	82,500	83,500,009	84,132,509
Տարվա շահույթ	-	-	9,796,617	9,796,617
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	9,796,617	9,796,617
Շահաբաժիններ	-	-	(16,500,000)	(16,500,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(16,500,000)	(16,500,000)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	550,000	82,500	76,796,626	77,429,126

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	9,796,617	6,144,029
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	12,091,215	14,104,576
Հիմնական միջոցների օտարումից վնաս	319,181	348,279
Շահութահարկի գծով ծախս	2,793,104	3,337,123
Ֆինանսական եկամուտ	(633,353)	(765,255)
Շնորհներից եկամուտ	(74,649)	(48,906)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	72,950	215,740
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	24,365,065	23,335,586
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	6,399,992	4,476,437
Պաշարների փոփոխություն	(334,222)	109,171
Աշխատակիցներին տրամադրված փոխառությունների փոփոխություն	(195,060)	203,970
Ռոումինգի երաշխիքային կանխավճարների փոփոխություն	1,430	(4,555)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(749,689)	(379,922)
Հետաձգված եկամուտների փոփոխություն	(250,561)	(31,890)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	29,236,955	27,708,797
Վճարված շահութահարկ	(1,019,300)	(2,729,223)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	28,217,655	24,979,574

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(7,785,727)	(8,089,545)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	228,110	30,054
Տրամադրված փոխառությունների մարում	8,276	106,587
Ավանդների (ներդրում)/մարում	(4,463,266)	968,835
Ստացված տոկոսային եկամուտ	217,712	310,540
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(11,794,895)	(6,673,529)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարված շահաբաժիններ	(16,500,000)	(20,333,333)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(16,500,000)	(20,333,333)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ նվազում	(77,240)	(2,027,288)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	5,113	(58,583)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	3,186,930	5,272,801
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	3,114,803	3,186,930

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: